# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 հուլիսի 2022 թվականի N 276-Ա**

### ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 546-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1644-Ա որոշումը, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1644-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի հուլիսի 7-ի N 1026-Ա որոշումը՝

**որոշում եմ.**

1. Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Հ. Ցոլյան փողոց 2/2 հասցեում գտնվող 146,7 քմ մակերեսով դիարանը, 3,5 քմ մակերեսով հորը և 1,9 քմ մակերեսով պարիսպը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ն ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

19.07.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. հուլիսի 19
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հուլիսի 19 -ի
N [illegible]26-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման
կոմիտեին գույք հանձնելու նպատակով ստեղծված
հանձնման հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Արմեն Թադևոսյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Արփինե Բաղդասարյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի մասնագետ |
| Դավիթ Մաշուրյան | - | «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն |
| Արթուր Լալաբեկյան | - | «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ: |

19.07.2022

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարին փոխարինող — Գ. Թադևոսյան